

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Մարգարյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Գյումրի քաղաքում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-998-06.05.2016-ՏՀ-010/0) վերաբերյալ:

Օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել, որ՝

1) Գյումրի քաղաքի վարչական սահմաններում գտնվող առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով բնակչության համար կազմակերպված մանրածախ վաճառքի (առք ու վաճառքի) իրականացման գործունեությունից ստացված եկամուտներն ազատվում են շրջանառության հարկից՝ 50 տոկոսի չափով, իսկ նշված գործունեությունն իրականացնող և շրջանառության հարկ վճարող համարվող

անհատ ձեռնարկատերերն ազատվում են ձեռնարկատիրական գործունեության համար օրենքով նախատեսված եկամտային հարկից.

2) Գյումրի քաղաքի վարչական սահմաններում տնտեսական գործունեության շրջանակներում արտադրության (բացառությամբ ենթասկզբիցային ապրանքների արտադրության) կազմակերպման արդյունքում ստացված արտադրանքի՝

ա. իրացումից ստացված եկամուտներն ազատվում են շրջանառության հարկից՝ 50 տոկոսի չափով,

բ. օտարման գործարքներն ազատվում են ավելացված արժեքի հարկից՝ 50 տոկոսի չափով,

գ. իրացումից ստացման ենթակա եկամուտներն ազատվում են շահութահարկից կամ եկամտային հարկից՝ 50 տոկոսի չափով.

3) Գյումրի քաղաքի վարչական սահմաններում իրականացվող՝ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործունեությունն ազատվում է արտոնագրային վճարից՝ 50 տոկոսի չափով, իսկ այդ գործունեությունն իրականացնող անհատ ձեռնարկատերերը՝ ձեռնարկատիրական գործունեության համար օրենքով նախատեսված եկամտային հարկից՝ 50 տոկոսի չափով.

4) կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն ազատվում են Գյումրի քաղաքում իրականացվող գործունեության մասով՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում, որպես հարկային գործակալ, հարկը հաշվարկելու, պահելու և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից՝ բացառությամբ հարկային գործակալի կողմից վճարվող՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից և դրանց հավասարեցված եկամուտներից օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող եկամտային հարկի և սոցիալական վճարի:

Առաջարկվում է նաև սահմանել, որ՝

1) Գյումրիի քաղաքում 40 և ավելի աշխատատեղ ստեղծելու նպատակով նվազագույնը 100 մլն դրամ ներդրում իրականացնող կազմակերպությունները 18 ամիս ժամկետով ազատվում են շահութահարկից և եկամտային հարկից.

2) Գյումրիի քաղաքում 80 և ավելի աշխատատեղ ստեղծելու նպատակով նվազագույնը 200 մլն դրամ ներդրում իրականացնող կազմակերպությունները 2 տարի ժամկետով ազատվում են շահութահարկից և եկամտային հարկից.

3) Գյումրիի քաղաքում 100 և ավելի աշխատատեղ ստեղծելու նպատակով նվազագույնը 400 մլն դրամ ներդրում իրականացնող կազմակերպությունները 3 տարի ժամկետով ազատվում են շահութահարկից և եկամտային հարկից.

4) Գյումրիի քաղաքում 150 և ավելի աշխատատեղ ստեղծելու նպատակով նվազագույնը մեկ մլրդ դրամ ներդրում իրականացնող կազմակերպությունները 4 տարի ժամկետով ազատվում են շահութահարկից և եկամտային հարկից.

5) Գյումրիի քաղաքի «Շիրակ» օդանավակայանի տարածքը հինգ տարի ժամկետով ազատ տնտեսական գոտի է.

6) Գյումրիի քաղաքում գրանցված և գործունեություն իրականացնող կազմակերպությունները Գյումրիում իրականացվող շինարարական մրցույթներում հաղթող են ճանաչվում նաև այն դեպքում, երբ մրցույթի մյուս մասնակիցների կողմից առաջարկվող գնից մինչև 5 տոկոս բարձր գին են առաջարկում:

Ընդ որում, օրենքի նախագծի հիմնավորման համաձայն, օրենքի նախագծի ընդունման արդյունքում աղետի գոտում, մասնավորապես, Գյումրիի քաղաքում էականորեն կակտիվանան նպատակային ներդրումները:

Այդ կապակցությամբ հայտնում ենք հետևյալը՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը ողջունելի է համարում ներդրումային միջավայրի աճի խթանմանն ու համայնքներում գործարար ակտիվության

մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումները: Դրա մասին է վկայում Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Միաժամանակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներդրումների ծավալի աճի խթանմանն ուղղված միջոցառումները պետք է լինեն առավելագույնս հավասարակշռված և հասցեական, որպեսզի դրա արդյունքում ակնկալվող արդյունքները գերազանցեն պետության կողմից կրած կորուստները:

Միաժամանակ՝ գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության ներդրումային միջավայրի պակաս գրավիչ լինելը բացառապես հարկային գործոնով պայմանավորելը հիմնավոր չէ, քանի որ Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը (հարկի դրույքաչափերը, հարկային հաշվառման և հարկային վարչարարության իրականացման ընթացակարգերը և այլն) ներդրումների իրականացմանը նպաստելու առումով չի զիջում տարածաշրջանի այլ երկրների հարկային համակարգերին: Դրա մասին է վկայում այն հանգամանքը, որ օրենքի նախագծով առաջարկվող արտոնությունների բացակայության պայմաններում բազմաթիվ են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հաջողությամբ իրականացված և իրականացվող ներդրումային ծրագրերը:

Ներդրումների ծավալի աճին ուղղված միջոցառումները պետք է ունենան համակարգային բնույթ և ուղղված լինեն առկա բոլոր խոչընդոտների վերացմանը: Հակառակ դեպքում՝ ներդրումների ծավալի աճին նպաստելու համար այս կամ այն տարածաշրջանի համար բացառապես հարկային արտոնությունների նախատեսումը հանգեցնելու է միայն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների կորուստների՝ առանց այդ տարածաշրջաններում նոր ներդրումների իրականացման: Այս առումով՝ սահմանամերձ համայնքների համար սահմանված արտոնությունները հիմնավորված

էին, քանի որ նման արտոնությունների սահմանումը հիմնավորվում էր նախևառաջ այն հանգամանքով, որ նշված համայնքների բնակիչները գտնվում են կյանքին և գույքին սպառնացող մշտական վտանգի ներքո, և արտոնությունների տրամադրումը նպաստում է նաև երկրի ազգային անվտանգությանը:

2. Ներդրումների ներգրավման խնդիրն այսօր արդիական է ամբողջ հանրապետության մակարդակով: Այս առումով անհասկանալի է նման խտրական մոտեցումների ամրագրման տրամաբանությունը, քանի որ հիմնավորված չի կարող համարվել ներդրումների խթանման համար պետության կողմից միայն տեղային միջոցառումների իրականացումը: Մասնավորապես, անհասկանալի է, թե ինչու են արտոնությունները նախատեսվում միայն Գյումրի քաղաքի համար, երբ ներդրումների ներգրավման խնդիրներ ունեն նաև, օրինակ, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզը կամ Վայոց ձորի մարզը: Առավել ևս, երբ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզը նույնպես համարվում է երկրաշարժից տուժած բնակավայրեր ունեցող մարզ:

Հետևաբար, գտնում ենք, որ ներդրումային միջավայրի խթանման նպատակով պետության կողմից իրականացվող միջոցառումները պետք է ունենան համալիր և համակարգված բնույթ: Այս առումով ներկայացված օրենքի նախագծով առաջարկվող՝ հարկման բազայի կրճատմանն ուղղված՝ աննախադեպ ընդգրկման ծավալներ ունեցող հարկային արտոնությունների սահմանման վերաբերյալ առաջարկություններն ընդունելի չեն, քանի որ դրանք միակողմանի բնույթ են կրում և ուղղված են միայն հարկային արտոնությունների սահմանմանը:

3. Հարկ է նկատել, որ օրենքի նախագիծը մի մասով ամբողջությամբ վերարտադրում է «Սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հարկային արտոնությունները, իսկ մյուս մասով նախատեսում է լրացուցիչ՝ առավել ընդլայնված հարկային արտոնություններ՝ Գյումրի քաղաքում իրականացվող գործունեության համար: Վերջինս նշանակում է, որ օրենքի նախագծով առաջարկվող արտոնությունները մրցակցու-

թյան մեջ են մտնելու սահմանամերձ համայնքների համար սահմանված արտոնությունների հետ և անխուսափելիորեն ձախողելու են այդ օրենքի առջև դրված հիմնական խնդիրները, քանի որ ակնհայտ է, որ օրենքի նախագծով առաջարկվող արտոնությունների սահմանման դեպքում ներդրում կատարելու ցանկություն ունեցող տնտեսավարող սուբյեկտները ներդրումներ կկատարեն Գյումրի քաղաքում: Արդյունքում չեն իրականացվի «Սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի առջև դրված այնպիսի նպատակներ, ինչպիսիք են սահմանամերձ համայնքների տնտեսական ակտիվության մակարդակի բարձրացումը, այդ համայնքներում բնակվող քաղաքացիների համար աշխատատեղերի ստեղծումը, եկամուտների ապահովումը և այլն:

4. Հարկ ենք համարում ընդգծել, որ օրենքի նախագծի ընդունումը լուրջ խնդիրներ է ստեղծելու նաև տարածքների համաչափ զարգացման ապահովման տեսանկյունից, քանի որ օրենքի նախագծով ներկայացված արտոնությունների սահմանման արդյունքում Գյումրի քաղաքին հարակից բնակավայրերում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներն արտոնություններից օգտվելու նպատակով իրենց գործունեությունը կտեղափոխեն Գյումրի քաղաք, ինչի արդյունքում կստացվի այնպես, որ մեկ քաղաքում նոր աշխատատեղերն ստեղծվում կամ նոր ներդրումները ներգրավվում են այլ բնակավայրերի՝ արդեն իսկ ստեղծված աշխատատեղերի կամ այլ մարզերում իրականացվելիք ներդրումների հաշվին:

5. Օրենքի նախագծով ներկայացված արտոնությունների սահմանման արդյունքում մինևույն գործունեությամբ զբաղվող, սակայն տարբեր տարածաշրջաններում փաստացի գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների միջև կստեղծվեն հարկման անհավասար պայմաններ, ինչը չի բխում հարկման արդարության ու հավասարության սկզբունքից: Հարկ է նկատել, որ այդ ռիսկերն առկա են նաև «Սահմանամերձ համայնք-

ներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դեպքում: Այդուհանդերձ, հաշվի առնելով օրենքի առջև դրված նպատակների կարևորությունը և այն, որ օրենքի շրջանակներում ընդգրկվելու են խիստ սահմանափակ թվով համայնքներ, նման ռիսկերը կառավարելի են: Մինչդեռ, ներկայացված օրենքի նախագծով առաջարկվող արտոնությունների մասով նշված ռիսկերը կառավարելի չեն և անտեսվել չեն կարող, քանի որ օրենքի նախագիծը, ըստ էության, կիրառելի է լինելու ամբողջ Գյումրի քաղաքում և, հետևաբար, կարող է ընդգրկել հարկ վճարողների առավել մեծ խմբեր:

6. Հարկային արտոնությունների սահմանումը չի բխում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող հարկային քաղաքականության ուղղություններից, քանի որ իրականացվող հարկային քաղաքականությունն ուղղված է հարկման բազաների ընդլայնմանը և հարկային արտոնությունների շրջանակի կրճատմանը:

7. Օրենքի նախագծով առաջարկվող արտոնությունները մեծ մասամբ անկիրառելի են և կիրառելի չեն: Մասնավորապես, անկիրառելի են և օտարման գործարքներն ավելացված արժեքի հարկից 50 տոկոսի չափով ազատելու դրույթը, քանի որ նույն գործարքը չի կարող մի մասով համարվել հարկվող, մյուս մասով՝ ազատված: Միաժամանակ՝ նշված առաջարկությունը ենթադրում է նաև ավելացված արժեքի հարկ վճարողի կողմից հարկային հաշվառման լրջագույն բարդություններ՝ հաշվի առնելով ավելացված արժեքի հարկի հաշվարկման համար օրենքով սահմանված կարգավորումները (դրանց համատեքստում և օրենքի նախագծով առաջարկվող արտոնության կիրառման պարագայում հարկ վճարողի կողմից վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի հաշվարկումը դառնում է անհնար): Գյումրի քաղաքում նոր աշխատատեղեր ստեղծելու նպատակով ներդրում իրականացնող կազմակերպությունների՝ շահութահարկից և եկամտային հարկից որոշակի ժամկետով ազատման դրույթներն անհասկանալի են: Անհասկանալի է, օրինակ, թե ինչպես է եկամտային

հարկից ազատման արտոնությունը տարածվելու կազմակերպությունների վրա: Եթե խոսքը վերաբերելու է կազմակերպությունների՝ որպես հարկային գործակալ ֆիզիկական անձանց վճարած եկամուտներից հաշվարկված եկամտային հարկին, ապա արտոնության սահմանումն իր հերթին կխախտի վարձու աշխատողների ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստի, ինչպես նաև պետական կենսաթոշակային համակարգից կենսաթոշակների ստացման իրավունքը, քանի որ այդ իրավունքները պայմանավորված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եկամտային հարկ վճարած լինելու հանգամանքով: Անհասկանալի են նաև շահութահարկից ազատման արտոնության մասին դրույթները: Մասնավորապես, անհասկանալի է՝ արդյո՞ք, նշված արտոնությունը վերաբերում է միայն Գյումրի քաղաքում ստեղծված կազմակերպությունների կատարած ներդրումներին, թե՛ նաև՝ դրանից դուրս ստեղծված բոլոր կազմակերպություններին (ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ), որոնք ներդրում կկատարեն Գյումրի քաղաքում (այդ թվում՝ եթե այդ ներդրումները կատարվում են Գյումրի քաղաքում ստեղծված կազմակերպություններում): Օրենքի նախագծի 5-րդ հոդվածով շահութահարկից ազատման արտոնության ժամկետը նախատեսվում է 18 ամիս, սակայն շահութահարկի հաշվետու ժամանակաշրջանը համարվում է հաշվետու տարին, և նշված 18-ամսյա ժամկետն արտոնության կիրառման համար անիրատեսական է:

8. Օրենքի նախագծի 10-րդ հոդվածով առաջարկվող դրույթի ընդունման դեպքում գնումները կիրականացվեն համեմատաբար թանկ գնով, պայմանագիրը կշնորհվի, ըստ էության, ոչ շուկայական մեխանիզմով՝ անհավասար մրցակցության պայմաններում: Բացի դրանից, առկա է նաև վտանգ, որ մասնակցին կտրվի նախապատվություն, սակայն վերջինս պայմանագիրը կկատարի այլ կերպ՝ ոչ տեղական ռեսուրսների օգտագործմամբ:

9. Անհասկանալի է, թե «Շիրակ» օդանավակայանի տարածքն ազատ տնտեսական գոտի սահմանելու վերաբերյալ առաջարկությունն ինչպե՞ս կարող է նպաստել «Շիրակ» օդանավակայանից չվերթների թվի աճին:

10. Օրենքի նախագծի ընդունման հիմնավորման համաձայն՝ օրենքի ընդունման արդյունքում ամբողջ աղետի գոտում էականորեն կակտիվանան նպատակային ներդրումները, սակայն օրենքի նախագծում խոսքը միայն Գյումրի քաղաքի մասին է:

Միաժամանակ՝ հարկ ենք համարում ընդգծել, որ ներդրումների աճը խթանելու համար գործող հարկային օրենսդրությամբ արդեն իսկ նախատեսված են մի շարք արտոնություններ: Մասնավորապես՝

1) «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-ին հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ներդրումային նշանակություն ունեցող ապրանքների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքների համար Հայաստանի Հանրապետության սահմանին հաշվարկվող ավելացված արժեքի հարկի գումարների վճարումը հետաձգվում է մինչև 3 տարի ժամկետով: Հարկ է նկատել նաև, որ 2014 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ վերացվել է նշված արտոնությունից օգտվելու համար սահմանված՝ ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքների արժեքային շեմը, ինչի արդյունքում ներդրումային ծրագիր իրականացնող տնտեսավարող սուբյեկտները կարող են առանց սահմանափակման օգտվել նշված արտոնությունից: Բացի դրանից, ներդրումների ծախսատարությունը կրճատելու նպատակով ներդրումային փուլում օգտագործվող սարքավորումների մասով ներմուծման փուլում ավելացված արժեքի հարկից ազատելու արտոնություններ են սահմանված նաև «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ցանկում ներառված ապրանքների համար.

2) «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հավանության արժանացած գործարար ծրագիր իրականացնող ռեզիդենտի գործարար ծրագրի մեկնարկման ու դրան հաջորդող երկու հաշվետու տարվա շահութահարկի գումարը նվազեցվում է գործարար ծրագրի շրջանակներում ստեղծված նոր աշխատատեղերի մասով՝ համապատասխան տարվա ընթացքում հաշվարկված լրացուցիչ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների 100 տոկոսի չափով:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Արմեն Գևորգյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Գյումրի քաղաքում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Գյումրի քաղաքում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումն առողջապահության բնագավառի վրա կունենա դրական ազդեցություն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծով նախատեսվում է Գյումրի քաղաքում 50 տոկոսի չափ նվազեցնել «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով նախատեսված արտոնագրային վճարով հարկման ենթակա գործունեության համար գանձվող արտոնագրային վճարի չափը, հայտնում եմ, որ նշված կարգավորումը դրական ազդեցություն կունենա առողջապահության բնագավառի վրա, քանի որ «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հավելվածով որպես արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակ նախատեսված են նաև ստոմատոլոգիական և ատամնատեխնիկական բժշկական օգնության և սպասարկման տեսակները: Ուստի բժշկական օգնության և սպասարկման նշված տեսակների համար արտոնագրային վճարը 50 տոկոսի չափով նվազեցնելը կհանգեցնի Գյումրի քաղաքում ստոմատոլոգիական և ատամնատեխնիկական բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատչելիության և հասանելիության, նշված ծառայությունները մատուցողների գործունեության զարգացման և ընդլայնման:

Եզրակացություն

«Գյումրի քաղաքում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Գյումրի քաղաքում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

- ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.
- բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**:

ԱԶԴԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գյումրի քաղաքում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Գյումրի քաղաքում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գյումրի քաղաքում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Գյումրի քաղաքում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում աղետի գոտի համարվող Գյումրի քաղաքում, առևտրատնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց համար սահմանել որոշակի հարկային արտոնություններ, մասնավորապես՝ շրջանառության հարկով հարկվող առևտրական գործունեությունը, արտադրական, ինչպես նաև «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործունեությունը 50 տոկոսով ազատել հարկերից, ինչպես նաև Գյումրի քաղաքում աշխատատեղեր ստեղծելու նպատակով իրականացվող ներդրումները՝ կոնկրետ չափանիշների բավարարելու դեպքում սահմանված ժամկետներում ազատել շահութահարկից և եկամտահարկից:

Նախագիծով կարգավորվող շրջանակներն առնչվում են առևտրատնտեսական գործունեության շրջանակներում գործող մի շարք շուկաների (ապրանքների և ծառայությունների) հետ:

Նախագծի ընդունման պարագայում կստեղծվեն հարկային բարենպաստ և արտոնյալ պայմաններ Գյումրի քաղաքում առևտրատնտեսական գործունեության իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համար, սակայն միևնույն ժամանակ տարածաշրջանի տարանջատումը կբերի անհավասար մրցակցային պայմանների ձևավորմանը՝ Գյումրի քաղաքի

վարչական սահմաններից դուրս այլ համայնքներում առևտրատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսվարողների միջև:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *բացասական ազդեցություն հայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ

**«Գյումրի քաղաքում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին»
 ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին
 ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

Նախագծի գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով նախատեսվում է Գյումրի քաղաքի վարչական սահմաններում մանրածախ առևտրի, արտադրական, ինչպես նաև «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործունեությունը 50 տոկոսով ազատել հարկերից:

Միաժամանակ, նախատեսվում է կոնկրետ չափանիշերի բավարարելու դեպքում որոշակի ժամկետով Գյումրի քաղաքում իրականացվող ներդրումներն ազատել շահութահարկից և եկամտահարկից:

Նախագծով ներկայացված հարկային բեռի թեթևացման գաղափարն, ընդհանուր առմամբ, գործարար և ներդրումային միջավայրի վրա կարող է ունենալ դրական ազդեցություն, եթե ուղեկցվի համակարգային լուծումներով և տնտեսական զարգացման համարժեք գործիքակազմի ներդրմամբ: Մասնավորապես, նպատակահարմար է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքը վերանայել ոչ միայն Գյումրի քաղաքի, այլ նաև տնտեսական զարգացման առումով Երևանին էապես զիջող մյուս բոլոր քաղաքների համար:

Հարկման նպատակով որևէ տարածաշրջանի առանձնացումն, ինքնըստինքյան, կարող է խնդիրներ առաջացնել հավասար մրցակցային պայմաններ ապահովելու տեսանկյունից. Գյումրի քաղաքի վարչական սահմաններից դուրս ցանկացած այլ համայնքում գործող տնտեսավարող հայտնվելու է անհավասար մրցակցային պայմաններում՝ գործելով տնտեսական նույն կամ համանման միջավայրում:

Միևնույն ժամանակ, արտոնությունների տրամադրումը երկարաժամկետ և կարճաժամկետ հատվածում կարող է բացասաբար անդադառնալ ընկերությունների մրցունակության խթանների բարելավման վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունը որդեգրել է հարկային արտոնությունների կրճատման քաղաքականություն (ինչը նաև արտահայտվել է ՀՀ հարկային օրենսգրքի նախագծում) կարծում ենք՝ Գյումրի քաղաքի զարգացման համար անհրաժեշտ է ուսումնասիրել վերջինիս տնտեսության գերակա ոլորտները և այդ ոլորտներում դիտարկել պետական օժանդակության մեխանիզմների (մասնավորապես՝ սուբսիդիաների, արտոնյալ վարկերի) սահմանման հնարավորությունը:

**ՀԱՎԱԿՈՌՈՒԴՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Գյումրի քաղաքում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Գյումրի քաղաքում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գյումրի քաղաքում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջեպային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ՝

1) Գյումրի քաղաքի վարչական սահմաններում գտնվող առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով բնակչությանը մանրածախ վաճառքի (առք ու վաճառքի) իրականացման գործունեությունից ստացված եկամուտներն ազատվում են շրջանառության հարկից 50 տոկոսի չափով, իսկ նշյալ գործունեությունն իրականացնող և շրջանառության հարկ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերը ազատվում են ձեռնարկատիրական գործունեության համար օրենքով նախատեսված եկամտային հարկից,

2) Գյումրի քաղաքի վարչական սահմաններում տնտեսական գործունեության շրջանակներում արտադրության (բացառությամբ ենթակապիտալիստիկ ապրանքների արտադրության) կազմակերպման արդյունքում ստացված արտադրանքի՝

ա. իրացումից ստացված եկամուտներն ազատվում են շրջանառության հարկից 50 տոկոսի չափով,

բ. օտարման գործարքներն ազատվում են ավելացված արժեքի հարկից 50 տոկոսի չափով,

գ. իրացումից ստացման ենթակա եկամուտներն ազատվում են շահութահարկից կամ եկամտային հարկից 50 տոկոսի չափով,

3) Գյումրի քաղաքի վարչական սահմաններում «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործունեությունը ազատվում է արտոնագրային վճարից 50 տոկոսի չափով, իսկ այդ գործունեությունն իրականացնող անհատ ձեռնարկատերերը՝ ձեռնարկատիրական գործունեության համար օրենքով նախատեսված եկամտային հարկից՝ 50 տոկոսի չափով,

4) կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն ազատվում են Գյումրի քաղաքում իրականացվող գործունեության մասով ՀՀ օրենքներով նախատեսված դեպքերում, որպես հարկային գործակալ, հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից, բացառությամբ հարկային գործակալի կողմից վճարվող աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից և դրանց հավասարեցված եկամուտներից օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող եկամտային հարկի և սոցիալական վճարի:

Առաջարկվում է սահմանել նաև, որ՝

1) Գյումրի քաղաքում 40 և ավելի աշխատատեղ ստեղծելու նպատակով նվազագույնը 100 մլն. դրամ ներդրում իրականացնող կազմակերպությունները 18 ամիս ժամկետով ազատվում են շահութահարկից և եկամտային հարկից,

2) Գյումրի քաղաքում 80 և ավելի աշխատատեղ ստեղծելու նպատակով նվազագույնը 200 մլն. դրամ ներդրում իրականացնող կազմակերպությունները 2 տարի ժամկետով ազատվում են շահութահարկից և եկամտային հարկից,

3) Գյումրի քաղաքում 100 և ավելի աշխատատեղ ստեղծելու նպատակով նվազագույնը 400 մլն. դրամ ներդրում իրականացնող կազմակերպությունները 3 տարի ժամկետով ազատվում են շահութահարկից և եկամտային հարկից,

4) Գյումրի քաղաքում 150 և ավելի աշխատատեղ ստեղծելու նպատակով նվազագույնը 1 մլրդ. դրամ ներդրում իրականացնող կազմակերպությունները 4 տարի ժամկետով ազատվում են շահութահարկից և եկամտային հարկից:

Միաժամանակ առաջարկվում է Գյումրի քաղաքի «Շիրակ» օդանավակայանի տարածքը հինգ տարի ժամկետով սահմանել ազատ տնտեսական գոտի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ Նախագծի ընդունման ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա կլինի բացասական:

Միաժամանակ Նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի ծախսերի, ինչպես նաև համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

Պ-998-06.05.2016-S<-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության Գյումրի քաղաքում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Սույն օրենքի իմաստով Գյումրի քաղաքում իրականացվող գործունեություն է համարվում Գյումրի քաղաքի վարչական սահմաններում՝

1. առետրի օբյեկտների, առետրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով բնակչությանը մանրածախ վաճառքի (առք ու վաճառքի) իրականացման գործունեությունը.

2. տնտեսական գործունեության շրջանակներում արտադրության կազմակերպումը՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ է իրացվում պատրաստի արտադրանքը՝ Գյումրի քաղաքի վարչական սահմաններում, թե դրանցից դուրս:

3. «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործունեությունը:

Հոդված 3. Գյումրի քաղաքում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու արտոնությունների կիրառությունը նշանակում է, որ՝

1) Գյումրի քաղաքի վարչական սահմաններում գտնվող առետրի օբյեկտների, առետրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով բնակչությունը մանրածախ վաճառքի (առք ու վաճառքի) իրականացման գործունեությունից եկամուտներն 50%-ով ազատվում են շրջանառության հարկից, իսկ այդ գործունեությունն իրականացնող եւ շրջանառության հարկ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերն ազատվում են ձեռնարկատիրական գործունեության համար օրենքով նախատեսված եկամտային հարկից.

2) տնտեսական գործունեության շրջանակներում արտադրության (բացառությամբ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրության) կազմակերպման արդյունքում ստացված արտադրանքի՝

ա. իրացումից եկամուտներն 50%-ով ազատվում են շրջանառության հարկից,

բ. օտարման գործարքներն 50%-ով ազատվում են ավելացված արժեքի հարկից,

գ. իրացումից ստացման ենթակա եկամուտներն 50%-ով ազատվում են շահութահարկից կամ եկամտային հարկից

3) «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործունեությունը 50%-ով ազատվում է արտոնագրային վճարից, իսկ այդ գործունեությունն իրականացնող անհատ ձեռնարկատերերն 50%ով ազատվում են ձեռնարկատիրական գործունեության համար օրենքով նախատեսված եկամտային հարկից:

4) կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն ազատվում են Գյումրի քաղաքում իրականացվող գործունեության մասով Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում, որպես հարկային գործակալ, հարկը հաշվարկելու, պահելու եւ պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից, բացառությամբ հարկային գործակալի կողմից վճարվող՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից եւ դրանց հավասարեցված եկամուտներից

օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող եկամտային հարկի եւ սոցիալական վճարի:

Հոդված 4. Կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը Գյումրի քաղաքում իրականացվող գործունեության մասով՝

1) վարում են եկամուտների եւ ծախսերի առանձնացված հաշվառում (կազմակերպությունների համար՝ առանձնացված հաշվապահական հաշվառում), որի հիման վրա հաշվետու ժամանակաշրջանի համար օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված համախառն եկամուտը, ինչպես նաեւ այդ գործունեությունների հետ կապված ծախսերը հարկման նպատակով նվազեցվում են համապատասխանաբար նույն ժամանակաշրջանում Գյումրի քաղաքում իրականացվող գործունեության մասով ստացվող համախառն եկամտի եւ դրա հետ կապված ծախսերի գումարի չափով: Եթե Գյումրիում իրականացվող գործունեության հետ կապված ծախսերի որոշ տեսակների մասով հնարավոր չէ վարել առանձնացված հաշվառում, ապա այդ ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի համար օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ծախսերից հարկման նպատակով նվազեցվում են հաշվետու ժամանակաշրջանի համար օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված համախառն եկամտի մեջ համայնքներում իրականացվող գործունեության մասով հաշվարկված համախառն եկամտի տեսակարար կշռին համապատասխան: Առանձնացված հաշվառում վարելու արդյունքներն արտացոլվում են հարկային մարմին ներկայացվող հաշվարկներում եւ հայտարարագրերում:

2) իրենց կողմից առաքվող, տրամադրվող, վաճառվող ապրանքների (մատուցվող ծառայությունների) գծով գնորդների համար (ծառայություններից օգտվողների համար) դուրս են գրում հաշվարկային փաստաթղթեր՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իրականացնում են հաշվապահական հաշվառում (հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաեւ այլ հաշվառում եւ (կամ) գրանցումներ) եւ օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում հարկային մարմին են ներկայացնում հաշվարկներ, հայտարարագրեր, հարկային օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթեր եւ տեղեկություններ:

Հոդված 5. Գյումրի քաղաքում 40 եւ ավելի աշխատատեղ ստեղծելու նպատակով նվազագույնը 100մլն. ՀՀ դրամ ներդրում իրականացնող կազմակերպությունները 18 ամիս ժամկետով ազատվում են շահութահարկից եւ եկամտահարկից:

Հոդված 6. Գյումրի քաղաքում 80 եւ ավելի աշխատատեղ ստեղծելու նպատակով նվազագույնը 200մլն. ՀՀ դրամ ներդրում իրականացնող կազմակերպությունները երկու տարի ժամկետով ազատվում են շահութահարկից եւ եկամտահարկից:

Հոդված 7. Գյումրի քաղաքում 100 եւ ավելի աշխատատեղ ստեղծելու նպատակով նվազագույնը 400մլն. ՀՀ դրամ ներդրում իրականացնող կազմակերպությունները երեք տարի ժամկետով ազատվում են շահութահարկից եւ եկամտահարկից:

Հոդված 8. Գյումրի քաղաքում 150 եւ ավելի աշխատատեղ ստեղծելու նպատակով նվազագույնը 1մլրդ. ՀՀ դրամ ներդրում իրականացնող կազմակերպությունները չորս տարի ժամկետով ազատվում են շահութահարկից եւ եկամտահարկից:

Հոդված 9. Գյումրի քաղաքի «Շիրակ» օդանավակայանի տարածքը հինգ տարի ժամկետով սահմանել ազատ տնտեսական գոտի:

Հոդված 10. Գյումրի քաղաքում գրանցված եւ գործունեություն ծավալող իրավաբանական անձիք եւ կազմակերպությունները Գյումրիում իրականացվող շինարարական մրցույթներում հաղթող են ճանաչվում նաեւ այն դեպքում, երբ մրցույթի մյուս մասնակիցների կողմից առաջարկվող գնից մինչեւ 5 տոկոս բարձր գին են առաջարկում:

Հողված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2017թվականի հունվարի1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է Գյումրի քաղաքում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու հանգամանքով: Օրենքի ընդունման դեպքում աղետի գոտի համարվող Գյումրի քաղաքում, առետրատնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների, իրավաբանական եւ ֆիզիկական անձանց համար կսահմանվեն որոշակի հարկային արտոնություններ, որի արդյունքում աղետի գոտում, մասնավորապես Գյումրի քաղաքում էականորեն կակտիվանան նպատակային ներդրումները, տնտեսվարողների համար կստեղծվեն հարկային բարենպաստ եւ առանձնահատուկ արտոնյալ պայմաններ, ավելին Գյումրի քաղաքում գրանցված եւ գործունեություն ծավալող իրավաբանական անձիք եւ կազմակերպությունները Գյումրիում իրականացվող տարբեր շինարարական մրցույթներին մասնակցելուց կարող են հաղթող ճանաչվել, նույնիսկ այն դեպքում, երբ մրցույթի մյուս մասնակիցների առաջարկած գնից մինչեւ 5 տոկոս բարձր գին են առաջարկել: Նախագծի ընդունմամբ Գյումրի քաղաքի «Շիրակ» օդանավակայանի տարածքը կսահմանվի ազատ տնտեսական գոտի, որը հնարավորություն կտա ավելացնելու չվերթների քանակը, կստեղծվեն նոր աշխատատեղեր, եւ նշված ոլորտում, եւ ամբողջ մարզում: